

274

271/  
m.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

## ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԱԿԱԾԸՆՈՒԹԻՒՆ

**ՀՐԱՏՎՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ**

1919

ՆՈՅԵՄԲԵՐԻ 7 ԵՐԵՒԱՆ

№ 2

Ց Ա Ն Կ.

12. Հայաստանի Հանրապետութեան Մայրաքաղաքում՝ Ազգագրական-Մարդաբան նուկան թանգարան-Գրադարան հիմնելու մասին.
13. Հայաստանի Հանրապետութեան Մայրաքաղաքի Ազգագրական-Մարդաբանու նուկան թանգարան-Գրադարանի պահպանութեան համար 30.000 ր. վարկ բաշխութեան մասին.
14. 29, 30, 31 և 32 տարեկան բաղաքացիներին զօրակոչի ենթարկելու մասին.
15. Պատգամանուոր Ա. Տիգրանեանին Պարլամենտի փոխ-նախագահ ընտրելու մասին.
16. Գիւղան քաղաքու Գիւղանի գաւուսի և գաւառական ինքնավարութեան կենց գրու ճանաչելու մասին.
17. Գնդակներ պատրաստելու և փամփուշտներ լցնելու արհեստանոց բանալու համար Զօրական նախագարեն 6.000.000 ր. վարկ բանալու մասին.
18. Շրջանային գաղոցական տեսուչների ուժիքի յաւելման համար 9.600 ր. վարկ բանալու մասին.
19. Երկաթուղիներին հարկաւոք նաւթ գնելու համար Ներքին գործերի նոխարար թիւ 10.000.000 ր. վարկ բանալու մասին.
20. Հայաստանի Հանրապետութեան Զինւորական վարչութեան սպաներին, աստիքաւորներին և կամավարձուներին լիկվիդացիոն նախառ տալու մասին.
21. Կախարաբների և նրանց օգնականների պատգամաւորի կոչումը պահպան և ձախարարութեան իրաւունքից զօդուելու մասին.
22. Ջերուխու գնելոց Մկրտիչ Գարեգնեանի պատիքը մեղմացնելու մասին.
23. Հայոց թատերական վարդարանի նախնական ծախսերը հսկալու համար Հանրային կրթութեան և Արւետի Կախարաբութեան անունով 56,000 ր. վարկ բանալու մասին.

ՕՐԵՆՔ

12. Հայաստանի Հանրապետութեան Մայրաքաղա-



14247

**Քում՝ Ազգագրական-Մարդաբանական Թանգարան-  
Գրադարան հիմնելու մասին.**

Հաստատուած է 1919 թ. սեպտեմբերի 9-ին.

1. Հայաստանի Հանրապետութեան Մայրաքաղաքում հիմնուած է Ազգագրական-Մարդաբանական Թանգարան-Գրադարան:

2. Ազգագրական-Մարդաբանական թանգարան-Գրադարանին է յանձնուում, իրբե պետական սեպհականութիւն, «Հայոց Ազգագրական ընկերութեան» շարժական և անշարժ ամբողջ գոյքը, համաձայն նրա ընդհանուր ժողովի որոշման:

3. Թանգարանն Գրադարանի վարելու գործը յանձնուում է Հայաստանի Ազգագրական-Մարդաբանական ընկերութեանը, Հայաստանի Հանրապետութեան Հանրային կրթութեան և Արւեստի Նախարարի վերահսկողութեան տակ և նրա կողմից հաստատուած առանձին կանոնագրութեամբ:

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ  
Յ. Արդութեան

Աւագ քարտուղար Յ. Տէր Յակովիսան  
1919 թ. Սեպտեմբերի 10  
Երևան.

**ՕՐԵՆՔ**

**13. Հայաստանի Հանրապետութեան Մայրաքա-  
ղաքի Ազգագրական-Մարդաբանական Թանգարան  
Գրադարանի պահպանութեան համար 30.000 թ. վարկ  
բանալու մասին.**

Հաստատուած է 1919 թ. սեպտեմբերի 9-ին.

Բանալ Հանրային կրթութեան և Արւեստի Նախարարին երեսուն հազար բուրլու վարկ՝ Հայաստանի Ազգագրական-Մարդաբանական Թանգարանն, Գրադարանի պահպանութեան համար՝ 1919 թ. սեպտեմբերի 1-ից մինչև նոյն թուի գեկտեմբերի 31-ին:

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ  
Յ. Արդութեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովիսան  
1919 թ. Սեպտեմբերի 10  
Երևան:

**ՕՐԵՆՔ**

**14. 29, 30, 31 և 32 տարեկան քաղաքացիներին  
զօրակոչի ենթարկելու մասին.**

Հաստատուած է 1919 թ. սեպտեմբերի 9-ին.

1. Հայաստանի Հանրապետութեան 29, 30, 31 և 32 տարեկան քաղաքացիները, որոնք ծնւած են 1890, 1889, 1888 և 1887 թւականներին, Հայաստանի տերիտորիայի բոլոր գաւառներում կանչւում են զօրքի շարքերը աստիճանաբար, Զօրական Նախարարի հայեցողութեան և կարգադրութեան համաձայն, ըստ որում 32 տարեկան զինապարտներից (ծն. 1887 թ.) զօրակոչի են ենթարկելում միայն նրանք, որոնք ծնւած են, ցոյց տւած թւականի սեպտեմբերի 10-ից մինչև գեկտեմբերի 31-ը ժամանակամիջոցում:

2. Արտօնութիւնից օգտւում են զօրակոչի վայրկեանին պաշտօնի մէջ գտնուող՝ փաստ հետագրական հիմնարկութիւնների ծառայողները, բացի ցրիչներից ու պահապաններից, երկաթուղու ծառայողները, բացի օրավարձով աշխատող բանուորներից և միլիցիուսից ու բանտարյին հսկողութեան պաշտօնեանները, ինչպէս նաև զաւառական և զաւառակային կոմիսարները՝ իրենց օպնուկաններով, զատաւորները, պատավագային հսկողութեան պաշտօնեաններն ու քննիչները: Ծառայութիւնից հետանալու գէպքում սրանք փոխարինուում են զօրակոչի չենթարկելող զինապարտներով:

Ծանօթարիւն. Ներքին Գործերի, Զօրական և Արդարադատութեան Նախարարներից կազմւած յատուկ յանձնաժողովին վերապահնում է ստիպողական և անհրաժեշտ զեպքերում ըստ զինուորական ծառայութեան կանոնադրութեան 33 յօդ. յաւելման՝ (հրատ. 1915 թ.) արտօնութիւն տալու իրաւունքը:

3. Սոյն զօրակոչին պահեստի զինուորների հետ միասին զօրակոչի են ենթարկելում նաև 1 և 2 կարգի երկրապահ նոյն տարիքի, այսինքն 29-ից մինչև 32 տարեկան զինուորները, որոնք մինչև այժմ չեն ներկայացել զինուորական ծառայութիւնը կատարելու:

4. Ծառայութեան կանչւող պահեստի և երկրապահ զինուորները, որոնք ունեն հրացան՝ պարտաւոր են ներկայանալ հրացանով և երեքօրեայ հացի պաշտոնվ:

5. Մինչև 1919 թ. յունուարի 1-ը տրւած զինուորական ծառայութիւնից ազատող բոլոր զիայականները համարեւում են անվա-

ւեր և այդպիսի վկայական ունեցողները ենթարկւում են Զինուրական ստեանի վերաբննութեան:

6. Առյն գօրակոչի օրէնքը տարածւում է նաև արեմտահայերի վրայ: Մանօրաւրին. Արեմտահայերի տարիքը որոշելու համար Զինուրական ատեաններին կից կաղմակերպւում է մի յանձնաժողով, որի մէջ մանում են երեք արեմտահայ անդամներ ։ Պործերի Նախարարից նշանակւած, եթէ զինապարա արեմտահայերի մօտ հոգեսր կոնսիստորիայից տրւած ճննդեան վկայական չլինի, նրանց տարիքը պիտի որոշւի միմիայն թժշկական քննութեամբ, արտաքին տեսքի համաձայն: Յանձնաժողովը զօրակոչին չենթարկող անձանց տալիս է յատուկ վկայականներ, մատնանշելով նրանց տարիքը:

7. Պետական, հասարակական և մասնաւոր ծառայութեանց մէջ գտնւող սոյն օրէնքով գօրակոչւածները պահում են թէ իրենց զբաւած տեղերն ու պաշտօնները և թէ սահմանւած հիմնական սոճիկները:

8. Խոկական ծառայութեան մէջ ընդունւած երկրապահների և պահեստիների ընտանիքներն ստանում են նպաստ:

Նախագահող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ  
Յ. Արդութեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովիան

1919 թ. Սեպտեմբերի 10  
Երեան:

## ՈՐՈՇՈՒՄ

15. Պատգամաւոր Յ. Տիգրանեանին Պարլամենտի փոխ-նախագահ ընտրելու մասին.

Պարլամենտը 1919 թ. սեպտեմբերի 16-ի նիստում Պարլամենտի փոխ-նախագահ ընտրեց պատգամաւոր Սիրական Տիգրանեանին, նախադասող նիստի՝ Պարլամենտի աւագագոյն անդամ

Յ. Արդութեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովիան

1919 թ. Սեպտեմբերի 17  
Երեան:

## ՕՐԵՆՔ

16. Դիլիջան քաղաքը Դիլիջանի գաւառի և գտւա-

ռական ինքնավարութեան կենդրոն ճանաչելու մասին.  
Հաստատուած է 1919 թ. սեպտեմբերի 16-ին.

Դիլիջան քաղաքը ճանաչել կենդրոն Դիլիջանի գաւառի և գաւառական ինքնավարութեան:

Փոխ նախագահ՝ Պարլամենտի՝ Յ. Տիգրանեան  
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովիան  
1919 թ. Սեպտեմբերի 6  
Երեան:

## ՕՐԵՆՔ

17. Գնդակներ պատրաստելու և փամփուշաներ լրցնելու արհեստանոց բանալու համար Զօրական նստարարին 6.000.000 ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. սեպտեմբերի 16-ին.

Բանալ Զօրական նախարարին վեց միլիոն րուբլու վարկ՝ գնդակներ պատրաստելու և փամփուշաներ լրցնելու արհեստանոց հիմնելու համար:

Փոխ նախագահ՝ Պարլամենտի՝ Յ. Տիգրանեան  
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովիան  
1919 թ. Սեպտեմբերի 16  
Երեան:

## ՕՐԵՆՔ

18. Շրջանային գպրոցական տեսուչների սոճիկի յաւելման համար 9600 ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. սեպտեմբերի 16-ին.

1. Շրջանային գպրոցական տեսուչների հիմնական սոճիկը ամսական հաղար երկու հարիւր բուրլուց հացնել հազար չորս հարիւր բուրլու:

2. Բանալ Հայաստանի կրթութեան և Սրբութեան Նախարարի անունով ինսու հազար վեց հարիւր բուրլու վարկ՝ սոյն յաւելումը հատուցմանելու 1919 թ. սեպտեմբերի 1ից մինչև գեկտեմբերի 31-ը ժամանակամիջոցի համար:

Փոխ նախագահ՝ Պարլամենտի՝ Յ. Տիգրանեան  
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովիան  
1919 թ. Սեպտեմբերի 17  
Երեան:

## ՕՐԵՆՔ

**19.** Երկաթուղիներին հարկաւոր նաւթ գնելու համար  
Ներքին գործերի նախարարին 10.000.000 ր. վարկ  
բանալու մասին.

Հաստատված է 1919 թ. սեպտեմբերի 16-ին:

Բանալ Ներքին գործերի նախարարին տասը միլիոն լրութու  
վարկ՝ Հայաստանի երկաթուղիներին հարկաւոր նաւթ գնելու:  
Փոխ-նախագահ Պարլամենտի Ս. Տիգրանեան:

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովիսեան  
1919 թ. Սեպտեմբերի 17  
Երևան:

## ՕՐԵՆՔ

**20.** Հայաստանի Հանրապետութեան Զինուորական  
վարչութեան սպաներին, աստիճանաւորներին և  
կամավարձուներին լիկվիդացիոն նովաստ տալու  
մասին.

Հաստատված է 1919 թ. սեպտեմբերի 16-ին:

1. Հայաստանի Հանրապետութեան Զինուորական վարչութեան մէջ ծառայող սպաներին, աստիճանաւորներին, և կամավարձուներին, որոնք Զինուորական վարչութեան Հիմնարկութեանց վերացման, փոփոխման կամ ազգայնացման դէպքում կմնան շտատից դուրս, ինչպէս և իրենց պետի կարգադրութեամբ արձակողներին՝ լիկվիդացիոնի նովաստ տրւում է հետեւեալ չափերով —

ա. Առաջին հնգամեակին ամեն մի տարւայ համար, բացի առաջին տարուց, արւում է ամսական սոճիկի կէսը.

բ. Եկրորդ հնգամեակի ամեն մի տարւայ համար՝ ամսական սոճիկի մի քառորդը.

գ. Տաս տարուց յետոյ ամեն մի տարւայ համար ամսական սոճիկի մի ութերորդ մասը.

2. Մէկ տարուց աւելի ծառայութեան համար նովաստ տրւում է հետեւեալ չափով՝

ա. Առաջին հնգամեակի ամեն մի տարւայ համար, բա-

ցի առաջին տարուց, արւում է ամսական սոճիկի կէսը.  
բ. Երկրորդ հնգամեակի ամեն մի տարւայ համար՝ ամ-

սական սոճիկի մի քառորդը.  
գ. Տաս տարուց յետոյ ամեն մի տարւայ համար ամ-

սական սոճիկի մի ութերորդ մասը.

3. Վերոյիշեալ հաշիները անելիս վեց ամսից տւելի ծառայութիւնը հաշւում է սրպէս տարի, իսկ վեց ամսից պակասը հաշւի չի տանւում:

4. Ծառայողների սոճիկ ասելով հասկացւում է՝ բոլոր տեսակի ստանալիքները, այսինքն՝ սոճիկը, ըստ պաշտօնի յաւելումը և թանգութեան պատճառով արւած յաւելումները:

5. Սպաների, աստիճանաւորների և կամավարձուների լիկվիդացիոն նովաստով կամ տասնց նովաստի պաշտօնագուրկ անելու իրաւունքը վերապահուում է համապատասխան պետին:

6. Այս օրէնքի հաշիները անելիս ծառայութեան սկիզբը համարւում է 1918 մայիսի 28. ինչպէս այդ ժամանակին Զինուորական վարչութեան ծառայութեան մտած սպաների աստիճանաւորների և կամավարձուների, այնպէս էլ այդ ժամանակից տասն ընդունածների համար։ 1918 թ. մայիսի 28-ից ուշ ընդունածների հաշիները արւում է ծառայութեան մէջ մտնելու օրից։

7. Սոյն Օրէնքով վերացւում են Զօրական որոշումների 8-րդ գլուխ (1869 թ. հրատ.) համապատասխան յօդածները։

8. Սոյն Օրէնքը գործադրուում է Հայաստանի Պարլամենտում ընդունելու օրից։

Փոխ-նախագահ Պարլամենտի Ս. Տիգրանեան  
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովիսեան  
1919 թ. Սեպտեմբերի 17  
Երևան:

## ՕՐԵՆՔ

**21.** Նախարարների և նրանց օգնականների պատ-

գամաւորի կոչումը պահելու և ձայնաւութեան

իրաւունքից չօգտելու մասին.

Հաստատված է 1919 թ. սեպտեմբերի 19-ին.

Նախարարները և նրանց օգնականները, եթէ պատգամաւոր են, պահում են իրենց պատգամաւորական կոչումը, սակայն Պար-

լումինարի նիս ռերում քուէարկութեան չեն մասն ակցում։  
Փոխ-նախագահ Պարլամենտի  
Ա. Տիգրանիան  
Աւագ-քարտուղար՝ Յ. Տէր Յակովիան  
1919 թ. Սեպտեմբերի 20  
Երևան:

## ՕՐ Է Ն Ք

22. Զիրուխլու գիւղացի Մկրտիչ Դարբինեանի  
պատիժը մեղմացնելու մասին.

Պարլամենտը 1919 թ. Սեպտեմբերի 19-ի նիստում որոշեց՝  
Զիրուխլու գիւղացի Մկրտիչ Դարբինեանի տասր տարւայ տաժաւ-  
նակիր աշխատանքի պատիժը փոխարինել մէկ ու կէս տարւայ  
բանաւարկութեամբ, առանց իրաւունքներից զրկելու և պատժի ժա-  
մանակամիջոցը 1918 թ. սեպտեմբերի 15-ից հաշւելով՝ այսինքն  
զինւորա-շրջանային տրիբունալի գատավճիռը ոյժի մէջ մանելու  
օրից։

Փոխ-նախագահ Պարլամենտի

Ա. Տիգրանիան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովիան

1919 թ. Սեպտեմբերի 20

Երևան:

## ՕՐ Է Ն Ք

23. Հայոց թատերական վարժարանի նախնական  
ծախսերը հոգալու համար Հանրային Կրթութեան  
և Արւեստի նախարարութեան անունով 56.000 ր.  
վարկ բանալու մասին։

Հաստատած է 1919 թ. Սեպտեմբերի 23-ին.

Բանալ Հանրային Կրթութեան և Արւեստի նախարարութեան  
անունով յիսուն վեց հազար բուրլու վարկ՝ քսոն հազար միանւագ-  
ծախսերի և երեսուն վեց հազար հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմ-  
բեր ամիսներին թատերական վարժարանի նախնական ծախսերը  
հոգալու համար։

Փոխ-նախագահ Պարլամենտի՝

Ա. Տիգրանիան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակովիան

1919 թ. Սեպտեմբերի 24

Երևան:

